# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 26 | Հունիս | 2019 թ. | Ա | 0865875735 |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | | | |
| 26 | Հունիս | 2019 թ. | | |

Ճշգրտվող հաշվի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակահատվածը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Սյունիքի ՄՔՎ.նյութերը դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

26/06/2019 14:45:30

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## Փորձագիտական հիմնարկից դուրս հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

22 մարտի 2019թ. ք. Կապան

Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Նարինե Հովհաննիսյանս, քննարկելով Ռուբեն Թումանյանի ինքնասպանության դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

2019թ. մարտի 16-ին՝ ժամը $14^{35}$-ի սահմաններում, Քաջարանի Լեռնագործների փող. թիվ 19 շենքի 47-րդ բնակարանի պատշգամբի որպես տնտեսական պահարան ծառայող փորվածքում հայտնաբերվել է Ռուբեն Թամեռլանի Թումանյանի դին՝ պարանից կախված վիճակում:

Դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր, պարզվել է, որ Ռուբեն Թումանյանը Սյունիքի մարզի նյարդահոգեբուժական դիսպանսերում և նարկոլոգիական կաբինետում հաշվառված չի եղել, շրջապատի կողմից բնութագրվել է դրական, կրոնական կամ աղանդավորական որևէ շարժման չի անդամակցել, բնավորությամբ աշխույժ և կենսախինդ է եղել, շփվող, պարբերաբար գործածել է ալկոհոլային խմիչքներ: Ընտանիքում երբեք չի խոսել առողջական կամ անձնական կյանքում ունեցած խնդիրներից: 2003թ-ին ամուսնացել է Կարինե Կարապետյանի հետ, համատեղ կյանքում ունեցել է մեկ որդի և մեկ դուստր: Բնակվել է ընտանիքի և մոր՝ Օվսաննա Սեմերջյանի հետ, աշխատել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում՝ բանվոր: Վերջին շրջանում բողոքել է սրտի շրջանում ունեցած ցավերից, ընտանիքի կենցաղային հոգսերը հոգալիս կուտակել է պարտքեր և վարկեր:

2019թ. մարտի 15-ին մոր ծննդյան օրվա կապակցությամբ լույս 16-ի գիշերը խաշ է պատրաստել, 2019թ. մարտի 16-ին՝ առավոտյան ժամը 09:00-ին տանը հյուրընկալել է հորեղբոր որդուն՝ Շանթ Հարությունյանին, վերջինիս կնոջը, 2 ընկերներին, որոնք հեռացել են ժամը 10:30-ի սահմաններում: Ժամը 11:00-ի սահմաններում, դուստրը՝ Արգեն Թումանյանը և կինը տնից դուրս են եկել՝ Կապան քաղաքից սպորտային հագուստ գնելու նպատակով, իսկ որդին՝ Թամեռլանը, հորաքրոջ համար խաշ է տարել: Ժամը 12:00-ի սահմաններում, Ռուբիկ Թումանյանի բնակարան է այցելել հորաքույրը՝ Լաուրա Թումանյանը, խաշ կերել և ժամը 14:00-ի սահմաններում, մոր հետ վերադարձել աշխատանքի: Ժամը 14:30-ի սահմաններում, Կարինե Կարապետյանը և Անգին Թումանյանը վերադարձել են տուն, վերջինս տեսնելով, որ հայրը հյուրասենյակում չէ, փնտրել է խոհանոցում, ապա՝ ննջասենյակում, և նրան գտել պատշգամբում՝ որպես տնտեսական պահարան ծառայող փորվածքում դրված փայտե աստիճանին ամրացված

[illegible]ծքապարանից պատրաստված ամրօղակը՝ հագցված Ռ.Թումանյանի պարանոցին: Վերջինիս ոտքերը գտնվել են ծնկներից կիսածալ, ձեռքերը՝ ուսերից թույլ կախված, ողջ մարմնով՝ պարանից կախված, վիզը՝ թեքված վիճակում: Դուստրը մորն օգնության է կանչել, որն էլ Ռուբեն Թումանյանին ազատել է պարանից, պառկեցրել հատակին, արհեստական շնչառություն տվել, կատարել սրտի մերսում, իսկ Ա.Թումանյանը՝ զանգահարել է շտապ օգնություն:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է պարզել Ռուբեն Թումանյանի ընդհանուր հոգեկան վիճակը, թե ինչպիսի հոգեբանական վիճակում է նա ինքնասպան եղել, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245, 249-րդ հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Ռուբեն Թումանյանի ինքնասպանության առթիվ նախապատրաստվող նյութերով փորձագիտական հիմնարկից դուրս նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Մ.Հերացու անվան ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի փորձագետներին:

2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել ներքոհիշյալ հարցերը.

ա. Ի՞նչ անհատական հոգեբանական առանձնահատկություններ է ունեցել Ռուբեն Թամեռլանի Թումանյանը:

բ. Ի՞նչ հոգեկան վիճակում է գտնվել Ռուբեն Թումանյանն ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում, ի՞նչ հուզական վիճակում, որն էականորեն ազդել է նրա գիտակցության և վարքի վրա:

գ. Ունեցե՞լ է արդյոք Ռուբեն Թումանյանը հոգեկան հիվանդության հետ չկապված հոգեկան զարգացման շեղում: Եթե այո, ապա ի՞նչ հոգեկան բնութագրում է ունեցել այն: Փորձագետների առաջին իսկ պահանջով տրամադրել նախապատրաստված նյութերը:

3. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ Նարինե Հովհաննիսյան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## Փորձագիտական հիմնարկից դուրս հետմահու դատահոգեբանական փորձաքննության կատարման համար փորձագետ ճանաչելու մասին

ք. Կապան

15 ապրիլի 2019թ.

Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Նարինե Հովհաննիսյանս, քննարկելով Ռուբեն Թումանյանի ինքնասպանության դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

2019թ. մարտի 16-ին՝ ժամը $14^{35}$-ի սահմաններում, Քաջարանի Լեռնագործների փող. թիվ 19 շենքի 47-րդ բնակարանի պատշգամբի որպես տնտեսական պահարան ծառայող փորվածքում հայտնաբերվել է Ռուբեն Թամեռլանի Թումանյանի դին՝ պարանից կախված վիճակում:

Դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր, և նկատի ունենալով, որ անհրաժեշտ է պարզել Ռուբեն Թումանյանի ընդհանուր հոգեկան վիճակը, թե ինչպիսի հոգեբանական վիճակում է նա ինքնասպան եղել, 2019թ. մարտի 22-ին նշանակվել է փորձագիտական հիմնարկից դուրս հետմահու դատահոգեբանական փորձաքննություն:

2019թ. մարտի 23-ին որոշում է կայացվել նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու մասին:

2019թ. ապրիլի 12-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնից ստացվել է ամբիոնի վարիչ, դոցենտ Խ.Գասպարյանի միջնորդությունն առ այն, որ Ռուբեն Թումանյանի ինքնասպանության առթիվ նախապատրաստվող նյութերով փորձաքննության կատարման համար անհրաժեշտ է փորձագետ է ճանաչել հ.գ.թ., դոցենտ Խաչատուր Վլադիմիրի Գասպարյանին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասով և 249-րդ հոդվածով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Ռուբեն Թումանյանի ինքնասպանության առթիվ նախապատրաստվող նյութերով փորձագիտական հիմնարկից դուրս նշանակված հետմահու դատահոգեբանական փորձաքննության կատարման նպատակով հ.գ.թ, դոցենտ Խաչատուր Վլադիմիրի Գասպարյանին ճանաչել փորձագետ:

ՀԿԳ ավագ քննիչ Նարինե Հովհաննիսյան